

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 բուբլի, կես տարվանը 6 բուբլի: Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսչութիւն. Գիւղից դէպի քաղաք. Նամակ Ախալցխայից. Նամակ Ղուբայից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքիա և քաղաքական հարցը. Արտաքին լուրեր. — ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բաշխնդրեանի պատկերահանութիւնը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒԳԻՅ ԴԵՊԻ ԲԱՍՏԱՐ

Տնտեսական ծանր դրութիւնը օրից օր աւելի ու աւելի ճնշում է մեր դիւղագոն: Գիւղական դասակարգի մէջ տեղի են ունենում շատ վնասակար երևոյթներ, իբրև հետևանք այդ անտեսական ճգնճամբան: Գիւղական երիտասարդ յոյժերը դիմում են դէպի քաղաքները փող աշխատ և լուս Գիւղը զրկվում է իր թարմ ոյժերից, որոնք, տարաբաղաբար, վերադառնում են գիւղը դատարկ զրպանով, շատ անգամ և մաշված մարմնով ու հոգով...

Արդէն վաղուց է, որ այդ ցաւալի իրողութիւնը չէ ընդհատվում, ամեն տարի աւելանում է գիւղացի երիտասարդների թիւը քաղաքներում: Բազում գլխաւոր կենտրոններից մէկն է, որտեղ խմբվում է գիւղական երիտասարդութիւնը. բայց ինչ կեանք են վարում դրան, ահա գլխաւոր ինչիցը. ինչպէս են անցկացնում դրան իրանց կեանքը այն բաղամասրէ քաղաքներում, որտեղ խմբվում են գիւղացի եկողները, և տեղական պայմաններին համեմատ գործ են յանձն առնում:

Գիւղերից գալով քաղաք, դրանք գտնում են ծառայութիւն առհասարակ նաւթագործարաններում, կաթնայտագործարաններում, դարձանոցներում, քարվանսարաններում, և պարապվում են բեռնակիր մշակութեամբ և գիւղերապահութեամբ: Վարձում են քաղաքի մի խուլ անկիւնում անհեալ 4—6 բուբլի մասնավարով: Բայց որովհետև ամիսը 8—12 բուբլի ստացող բանւորի համար ծանր է երկու կամ երեք հոգով այդքան վարձ վճարելուց յետոյ թէ իրանց կերակրել և թէ, ամենազլուսաւոր, մի քանի մանկէթ յետ ձգել իրանց թշուառ ընտանիքի և անխիղճ պարտատիրոջ համար, ուստի խմբվում են 8—10 հոգի և գրեթէ միմեանց վրա թափված ապրում են մի անհեալում: Սեննակի...:

Սարապիկի տեսարան են ներկայացնում դրանց

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԲԱՇԽՆԴՐԵԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՆՈՒԹԻՒՆ

Կիրակի, հոկտեմբերի 19-ին, բացվեցաւ Թիֆլիսում, «Կովկաս» հիւրանոցի տակ գտնուող մի մեծ մագաղինում մեր երիտասարդ նկարիչ Գեորգ Բաշխնդրեանի պատկերահանութիւնը: Նկարիչը զրեւ է այդ հանդիսում 30-ի չափ մեծ և փոքր պատկերներ, որոնցից մեծ մասը հին են և մեր հասարակութեանը արդէն ծանօթ են, իսկ նրանցից 6 կամ 7 հատը բոլորովին նոր են, կամ նորոգված ու զանազան մանրամասնութիւններով լրացած:

Մագաղինը, որտեղ բացվել է հանդէսը, մեր բոլոր մագաղինների նման մի երկար սենեակ է, որի առջևի մասը, որ դուրս է գալիս ուղիղ փողոցի վրա, բաւական լայն է, իսկ մագաղինի ետևի կէտը մութն է, այնպէս որ նկարիչը ստիպվեցաւ այդ մասում զրկված իր նոր, մեծազրկ պատկերը լուսաւորել լամպայի լայտով:

Առաջին սենեակում աչքի է ընկնում նախ «Կուր գետի հովիտը» բաւական մեծ պատկերը: Այդ պատկերը նկարելով, պ. Բաշխնդրեան լուս

անհեալները, որոնք տան ներքին յարկն են կազմում:

Չարմանալի սովորութիւն կայ այստեղ. տուն չինել տուողները տան հիւլքը գցել են տալիս բաւական խորից, այնպէս որ ներքնատան առաստաղը գրեթէ հաւասարվում է հողի մակերեսին: հետ և մի քանի, երբեմն միայն մէկ լուսամուտով բաւականանում են լայն համար: Որտեղից են մեր քաղաքներում էժան և փոքր ինչ յարմար բնակարանները... Ներքին անտանկի խոնաւութիւնը, մթութիւնը սարսուռ են աղբում մարդու վրա: Տանտէրերը չինել տալով այդ տեսակ աներ, երբեք աչքի առաջ են ունենում վարձով տալը զինվածաւորներին կամ ապրանքատէրերին, որոնք պահեստի պէտք ունեն. բայց պէտք է նկատել որ այժման շատ քիչ կարիք կայ գինտան և պահեստի և եթէ կայ, դրանք արդէն վարձած տեղեր ունեն: Ուրեմն մարդուն կամիք դարձնող այդ ներքնատները հարկաւորվում են ոչ այլ օքին, եթէ ոչ խեղճ գիւղացի բանւոր երիտասարդներին, որտեղ նոքա հանգստութիւն պէտք է դատեն...

Գաղափար չունենալով առողջապահական կանոնների մասին, ոչ միայն չեն հասկանում, որ մի անհեալում 10 հոգով ապրելը վնասակար է, այլ չեն հասկանում և այն, որ այդ անտանկի կեղտոտութիւնը, խոնաւութիւնը և մթութիւնը իրանց մեծ յոյսեր խոստացող կեանքի համար դահճի է ներկայացնում: Երեկոները վերադառնում են գործից, ի հարկէ, նեղացած, տանջված գործերի ծանրութիւնից, աղաների անխղճութիւնից, գործակատանքի ընտելութիւններից, սև նաւթաթափախ, իւղաթափախ շորերով, որը մինչև անգամ թափանցում է մինչև մարմնի ներքը: Գէտերը, եթէ մի ժամանակ առաջ ձեռ ծանօթ է եղել, այժմ հազիւ թէ ճանաչէր, այնքան է մոտաված սևացած, երբեմն մինչև այն աստիճան որ կատարեալ արքայ է ներկայացնում, այն տարբերութեամբ, որ վերջիններ բնական է և մաքուր, իսկ խեղճ բանւորինը արճեստական և կեղտոտ: Ընտանիքի յիշատակով յուզված և ֆիզիկապէս էլ յոգնած գիւղացի մշակը, երեկոյան մի առանձին բաւականութեամբ դիմում է իր ներքնատունը, ցերեկվայ խիտ ծանր աշխատանքից յետոյ հանդիստ վայելելու: Երբեմն լուսավոր է ստաղջրով, մի քանի անգամ ծով տալով երեսին, որով ոչ թէ մաքրվում է կեղտը, այլ ըսկելով սևելի կաշուն և դառնում է յա թէ, տաք, ջրալի կերակուր չունի, նրա ուտելիքը ծայրահեղ, պարզ կերակուրն է՝ ցամաք սև հացը թուլացած ըն

ծել է նկարչութեան մէջ մի բաւական դժուար լուծելի խնդիր, այն է ներկայացնել կտաւի վրա բարձրաւանդակից վերցրած մի տեսարան մի քանի հարիւր վերտոի հորիզոնով, որտեղ հեռուոր բնութիւնը յարաբարաբար ծածկվում է աշխատային առաւօտվայ մատախաւով և ամբողջ այդ հովիտում պայծառ ժապաւնի պէս, որը մոլոր անցնում է Կուր գետը, վերջապէս կորչելով պատկերի խորութեան մէջ: Մտաւախող որ գնալով սևելի թանձր է երևում հեռուորութեան մէջ, ծածկվում է հովիտում սարերի ստորոտները, այն ինչ սարերի շրջանակից բարձր օդը կատարելապէս թափանցելի է:

Պատկերի խորութեան նկարչութեան մէջ աւմենագիտուր խնդիրներից մէկն է համարվում: Եւ նոյն իսկ այդ խորութիւնն է որ Բաշխնդրեանին լաւ է աղողվում: Այդ տեսակ խորութիւն էՖէկտ աղողութեամբ կատարված է և մեր նկարչի մի այլ պատկերի վրա: Կա ներկայացնում է կախեթի և Ղաղապանի մէջտեղ գտնվող «Ճիւղերի անտառը»: Կուրական յոյս տանտուր, բաղկացած ճշուկայ ճառագիտուր յոյս և աւալիս ձեռ մի շաւիղ, որ ծառերի մէջ տեղանցնելով անհետանում է հեռու, հեռու ծառերի անվերջանալի խորութեան մէջ: Որքան նայում էք պատկերի վրա, աւելի և աւելի խորանալովում էք անտառի խորութեան մէջ, ձեռ այնպէս է թվում որ դուք անտառի մէջ էք գը

կերների մէջ ոչ չը կայ քիչ ուրախանալու անգամ... Հայց ուտելուց յետ անմիջապէս պառկում է ընկել, հանելով վերի կեղտոտ շորերը. բայց նրա ներքին շորերն էլ գրեթէ նոյնն են: Անխղճներ այնքան սև է և կեղտոտ, որ դժուարութեամբ է որոշվում ինչ լինելը, կամ երբեմն առանց անկողին միայն մի վերաբերում են բաւականանում... Ո՛հ, ինչ է ներկայացնում այդ ներքնատունը առաւօտը, ինչ օք է ննում մշակը, որ կազդուրվելու է եկել այդ սենեակը... Աստուած իմ ինչ հոտ է փչում. խոնաւութեան, կեղտոտութեան և տարբ մարդկանց շնչառութեան արտաբերումն միախառնվելով մի այն տեսակ աննկարագրելի հոտ է փչում, որ անկարելի է մի բոպէ անգամ միալ այդտեղ: Մարդ նայում է սևացած, ոսկրացած և կմակը դարձած գիւղացուն, ու սիրտը կրակ է ընկնում—ինչու համար այդպէս անհեալ կեղտոտ էք պահում և այդպիսի խոնաւ սենեակում ապրում, դա ձեռ համար վնասակար է, կարող էք հիւանդանալ,—ախմայից հարցնում էք: — «Քի մատաղ, պա դէ հոնց անհեղ, էք հէնց ա մեր պանը, հալաթ Աստուած իղէնցա գիրալ ճկաներիս».—[Ինչում է պատասխանը: Տեսել էք դուք ձևուր փողոցի անկիւնում, ձիւնի տակ պառկած մշակին, տեսել էք դուք դրան շէմքի մօտ ընկած մշակին, անկիւններում կուշ եկած մշակին: Գոցա յուսահատական դէմքից եզրակացնում էք, որ արդարև դոցա կեանքը ֆիզիկական և մտաւոր տանջանքներով է շրջապատած. կարծես ասում լինեն. «Ո՛հ, ինչ դառն է կեանքը, ինչու համար է նա, երբ փոքրիկ միսիթարութիւն անգամ չէ պատճառում մեզ: Այդ ֆիզիկական, բարոյական մեռելութեան մէջ գիւղացի մշակին ոգևորող այն նպատակն է, որի համար նա թողնի իր սիրելի գիւղը. նա ոգևորվում է իր ապագայ յարողութեամբ...»

Յաջողվելու է թէ չէ, այդ ուրիշ բան է, միմիայն նրա միակ յոյսն է յաջողեցնել և այդ յոյսն է, որ խեղճ երիտասարդին ապրեցնում է: Հետաքրքրից է նրա մտածողութիւններով, նրա կեթարած ապագայ կեանքով, կը տեսնէք որ, իրաւ, նա այդ յոյսովն է դիմանում այդ տանջանքներին, այդ քաղցածութեանը, ճնշումներին, զըրբկանքներին: Մէկը աշխատում է փող ժողովել պարտքը տալու և հօր գերեզմանը անպատուութիւնից ազատելու, միւրը, եթէ ամուսնացած է, ընտանեկան կարիքները հոգալու, երրորդը իր կտոր հողը վարելու համար ջանք է անում մի գոյք գոմէշի փողը գտնելու և հողի պարտքն էլ տալու, մի

անվում և աւելի ու աւելի էք մտնում նրա խորքերը: Ամբողջ տեսարանը ծածկված է ձիւնով: անտառի սկզբում երկու լեզգիներ են երեւում:

Բաշխնդրեանի նոր պատկերներից, որոնք զբոված են հանդիսում կը յիշեք այստեղ հետեւեալները. «Սևանի լիճ», «Սուրբ Ղազարի կղզին Վեներայից», «Վրաց գիւղ», «Արարատ», «Երբուտ», «Սրբի վերջին ճառագայթները», և վերջապէս մեծ պատկերը, որ ներկայացնում է «Հայերի գաղթը» Պարսկաստանից դէպի Ռուսաստան, 1828 թվին»:

Բաշխնդրեանի առանձնայատկութիւնն այն է որ նա երբ ծով է ներկայացնում, ինչպէս նրա «Վասպից ծով» ներկայացնող բաւական մեծ պատկերը, յետոյ «Սևանի լիճը», նմանապէս «Սուրբ Ղազարի կղզին», նա ծովը միշտ ներկայացնում է հանդարտ դրութեան մէջ: Նա չէ սիրում մրկիներ, փոթորիկներ, բնութեան կռիւ, ծովի ալիքների յուզված դրութիւն: Երևում է որ մեր երիտասարդ նկարչի գեղարուեստական տաղանդին աւելի յարմարվում է բնութեան անդորր տրամադրութիւն, հանդարտ դրութիւն, ջրի ստորադրութիւն, հանդարտ դրութիւն, ջրի ստորադրութիւն կատարելի տարրը իր մեղմ և հանդիսաբոյժներում: Այդպէս են նրա ծովային տեսարանների մեծ մասը:

Բաշխնդրեանի վրձինը բուն ընտանեկան է,

ուրիշ ընտանիքը քաղցած է. հինգերորդը քրոջը պէտք է մարդու տայ... Բայց, արեւոք, նոքա, որոնք դառնում են գիւղը մաշված մարմնով... դրանով ապահովացրին իրանց ապագան: Իսկ եթէ նաւթագործարանի անգուլթ կաթնասնեղը ձայնեւով շատերին խաչում, խորովում և անչնչացած դիակը շրջապատված նաւթաթափախ գիւղացիներին թաղվում է իրան օտար և խորթ երկրում, թաղելով իրան հետ և իր ապագայ յոյսերը և արտի մուրադը, իսկ եթէ ներքնատանը ցրտից և քաղցից տանջված հիւանդ մշակը ընդ միշտ զրկվում է իր սիրելիներից, որ մէկը ասենք... այն ժամանակ ինչ կը լինի գիւղում ապատողների դրութիւնը... Գիւղում կինը, երեխան, քոյրը մայրը, եղբայրը արտի տրոփիւնով սպասում են, սպասում և աղօթում են. աղօթում և սպասում են... Ապագայի նեղուր և յոյսը օրհասական կերպով կուռում է քաղաքի բոլոր տանջանքների դէմ,—փող ձեռք բերելու, հայրենիք դառնալու, որպէս զի աղատի իր-սիրելիներին ներդրելու միջոցով և պարտատիրոջ անպատուութիւնից... Սակայն գիւղական թարմ երիտասարդն էլ դժուար է դիմանում «մշակների» կեանքի խնդրվող և մեռցնող միջոցներին... քաղաքի մէջ նրա համար կորստեան շատ անցունդներ կան... Մի կեղտոտ նամակ փոստից, կամ շորերի ողորմելի մի կապով, ոչն են ցնդեցնում ամբողջ ընտանիքի յոյսերը... Գիւղում ողբում են դարիւրութեան մէջ մեռածի կեանքը... Եւ այդ օրից օր սովորական է դառնում... Միթէ այդ մասին դրականապէս հոգալու ժամանակը չէ...

Ս.

ՆԱՍՏԱԿ ԱՆՎԱՅՈՒՅՑԻ

Հոկտեմբերի 1-ին Մինչև երբ լուենք: Գիտեցէք մեր շուրջը կատարված առօրեայ կեանքի երևոյթները, թափանցեցէք նրա ամեն շառաւիղների մէջ, զըրբեցէք և հետազօտեցէք մեր հասարակական և ազգային գործերը, և դուք անուշտ պիտի համոզվէք, ոչ թէ մի միսիթարական կէտ գտնել, այլ կարեկցաբար պիտի շարժէք ձեր գլուխը, ափսոս ասելով, որ անտէրութեան ճիւղը տիրապետում է ամեն ինչում և ամեն տեղ:

Ահա ընդ, մեր քաղաքային առանձնաշորհեալ ինքնավարութիւնը, որը պարծնում է իր տասնեակ տարիների գոյութեան ընթացքում օրինակելի անաարբերութիւնով և ապարդիւն գործունէութեամբ. քաղաքը չօչափելի անմաքրութեան մէջ շաղխված՝ ընդունարան է մարդկա-

բայց ըմբռնել է մինչև այժմ այդ ընտանեկանութեան մի կողմը միայն, այն է մայր-բնութիւնը իր հանգիստ առնելու ժամանակ: Եթէ գեղարուեստը հայելի է գեղարուեստային հոգու արաւմագրութեան, պէտք է ընդունել որ կամ Բաշխնդրեան, որպէս նկարիչ, միշտ կը մնայ բնութեան հանգիստ տրամադրութեան պատկերացնող, որովհետև ինքն էլ, իր հողին էլ աւելի սուրբամաղի է բնութեան այդ հանգիստ վայրկեանները ըմբռնելուն, կամ նա զեռ ինքն իր կեանքում խիստ հողեկան փոթորիկներին ու յուզմունքներին երբէք ենթարկված չը լինելով, դեռ ևս չէ ըմբռնել ստեղծագործելու համար բնութեան ընտանեկանութեան և այդ կողմը, և դուրսէ կեանքի մէջ հետզհետէ առաջ դնալով կը ճաշակել այս կամ այն ձևով կեանքի յուզմունքների և փոթորիկների թէ դուռն և եթէ մի և նոյն ժամանակ քաղցր զգացմունքները, որոնք, ով գիտէ, ուրիշ դրօշմ կը դրօշմեն նրա ստեղծագործական տաղանդի վրա:

«Վրաց գիւղ» անունով պատկերը ներկայացնում է դարձեալ նոյն genre-ի պատկերը այն կողմից, որ այդտեղ էլ բնութիւնը վերցրած է իր կատարեալ հանդարտութեան ժամանակ: Կա խուկապէս գիւղ չէ, այլ առանձնապաճ գիւղական մի անակ, ազարակ, ինչպէս Վրաստանում շատ անգամ է պատահում տեսնել, գրեթէ ամայի,

ին կենսաբան արտաբնական ազդող թափառական խօսքերով, քաղաքի անաբո ճողերը մեծ մասամբ վաճառված, իսկ պարտքը 27 հազարից մինչև 60 հազարը բարձրված. ելևմտական մատենաները տասնհակ տարիների ընթացքում անաբո մասցած և ոչ մի տարվանը չը վաճառված հաշվե-տեսներով, ամիսներով առաջ վճարված հարցը թողած անկատար է: Ինչպես համար պարզ է չը պիտի լինի, մինչև քաղաքի ներկայացուցիչը թող չարախոսներով բացակայ է իր պաշտօնավար-ությունից, իր անձնական գործերի համար, թե՛ չը նրա հրամանակատար բազարի վերակացուն առաջնորդ է իր պետին նրա ճանապարհորդության միջոցում (խո՛ս ստանում են ուժեղները), հաս-տացեք լուծում են ամենքը, որովհետև ինամիական կուսակցությունը զորեղ է և յաղթող: Իսկ ո՞վ է տուժողը, եթե ոչ ողորմելի հասարակությունը:

Այս և մեր դպրոցները, քաղաքային դպրոցը լաւ թէ վատ շարժում է իր մեքենան, նա քիչ թէ շատ ցոյց է տալիս իր գոյությունը. իսկ մեր ծխական ազգային դպրոցները թող զոհվեն անձ-նական կրքերին. մինչ ցարդ կազմակերպված չէ ուսուցչական պերսոնալը (ոմանք մեղադրում են ս. առաջնորդին, որ նա իբրև թէ չէ հաստատում հոգա-բարձությունները և ուսուցիչներին): Թե՛ չը աշակերտներ և աշակերտուհիներ անհույս գառ-ներին նման պտտեն ուսումնարանների շուրջը. թե՛ չը ժամանակի անհույս կատարել իր շրջանը, ով է վաճառողը—կրկին խեղճուկ հասարակությունը և նրա մատող սերունդը:

Այս և մեր եկեղեցիները, որոնք թափուր են մնում ժամաւորներից, հոգևորականների և հասարակության մէջ եղած տարաձայնությունը թե՛ չը սառեցնէ ժողովրդի կրօնական զգացմունքները, կայ արդե՞ք մի միջնորդական կէտ, որ զէթ յուսահատություն անդուհը չը գործէ մեզ: Ամեն տեղ կիր, եսակներով, անտար-բերություն և վրէժխնդրություն: Աւելացրէք սը-բանց վրա ժողովրդի աղքատությունը, որը հե-տեանք է տնտեսության բացակայության, առե-տուրի տաճանապը, սիրոյ և համբաշխութեան կապի թուլանալը:

Որ են մեր հանրաշահ, բարեգործական հաս-տատությունները—հիւանդանոց, աղքատանոց, հասարակական գրադարան—ընթերցարան, կիրակի-նորեայ դպրոց, թատրոն, որոնք են մեր ժողովր-դական դաստիարակող, եկեղեցական քարոզիչները, եղբայրություն և սիրոյ միջնորդները, աղքատների խնամողները և վտանգների կարեկից և պաշտ-պանները: Այս բոլորից կարելի է եղբակացնել, որ մենք չունենք ընդունակ մարդիկ ղեկավար-ելու մեր հասարակական և ազգային գործերը, որ մենք պէտք է տառապանք գործիչ և գործող անուանված խմբակի եսական կամերից: Մինչև երբ պահելու ենք մեր զուգը վերմակի տակ, երկնչելով ամբաստանությունից ծածկել մեր վեր-բեր և չը ներկայացնել մեր պատուին և կենսա-քին սպառնացող վտանգները: Հէ՛լիմ էլ լուենք» Ա. Ա.

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Հոկտեմբերի 15-ին

Վաճառականներից շատերը Ղուբայում գալիս են այստեղ Շուշուց, Շամախուց և ուրիշ քաղաք-ներից առանց կապիտալի և վաճառականական գործին բոլորովին անտեղեկ: Սկզբից նրանք ըն-դունվում են որպէս գործակաւորներ, կամ մըտ-նում են արհեստաւորների մօտ արհեստ սովորե-լու համար: Դամանակով նրանք առաջադիմու-թիւն են ցոյց տալիս, փողեր են վաստակում և յետոյ գաւտնում են իսկապէս անուանի վաճառ-ականներ: Եւ այն ժամանակ, երբ հայ վաճառակա-նը ազատվում է իրան, դիզում է ցանկացած կապիտալ, — նա ամուսնանում է, հող է առնում, տուն է կառուցանում և աճելով ու բազմանալով նա թողնում է ճշգրիտ իրան համարիպ յետնորդ: Այս վերջին անուս է, որպէս է, բայց բոլորովին նոյնանման է ձևակերպվում, մարմնանում, օրի-նակով մի հօրը և ընտելանում նրա բոլոր սօ-վորություններին և կանոններին: Հօրը ամիտի պակասությունները նա միանգամայն ժառանգում է և գործադար պարծենում է, որ կարողանում է խաբել, ստել, պարծենում է, որ եսասէր է, էգօ-խտ է և իբր թէ պատուասէր է: Վաճառականը մեծ կարծիքներ ունի իր վրա, — նրան թոււմ է, օրինակ, որ անկախ է ինքը և իր հարստությունով կարող է իշխել ամենի վրա: Բայց մի մտացէք, որ այստեղ նա և զրոշի համար պատրաստ է ա-մեն յուր պէս ստորանալ, ցածրանալ և ամեն զղուելի հնարներ գործ դնել, որպէս զի օգտվի ձեզանից, — հակառակ դէպքում, երբ խնդրանք աղաչում էք զրվել լրագրին, կամ օգնել մի հիմ-նարկութեան, կամ բարեգործական նպատակին, — աւելի լաւ է որ ականջները փակեք չը լսելու համար, այնքան միջանկեալ ձախողություններ որ կը պատմէ ձեզ իր դրութիւնից: Եւ դա այդ-պէս է: Հայ վաճառականը իր կենսաբի կէտը կամ ամբողջ կենսաբի ծառայեցնում է փող աշխատե-լուն, դիզելուն: Բայց ինչ արժէք ունի փողերի կուտակում, երբ այդ փողերը նպատակայարմար դադարի չեն գործադրվում, ինչ նշանակու-թիւն ունի հարստությունը, երբ նա չէ ծառայում հասարակութեան զարգացման և լուսաւորութեան գործին և նոյն իսկ վաճառականական ասպարի-զի մէջ իրանց գործի բարգաւաճմանը: Մեր վա-ճառականը այդ դէպքերում խուլ, լուս, անտար-բեր է, ոչ զգալու սիրտ ունի և ոչ մտածելու զուտ: Նրան հաճելի է հինը, միջնադարեանը և միանգամայն նրան ընդդէմ է, հակառակ է նորը, բարեկիրթը, փրկարարը:

Մ. Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Ախալցխա, 1 հոկտեմբերի

Ես ինձ միշտ պատիւ եմ համարել ձեր զրօշա-կի տակ ծառայելու. երբեք չեմ ուրանում ձեր օգ-տաւէտ գործունէությունը լրագրական ասպարի-զում թէ ներկայ և թէ ապագայ հայր երախտա-զէտ լինելու է ձեզ, որ զուք փոշիից բարձրացու-ցիք և յեղափոխեցիք նրա մայրենի աշխարհառօ-լեզուն: Ձեր օգտակար ծառայությունները դէպի

հայ ազգը մի առ մի իշխել ինձ շատ հեռու կը տանէր. բաւական է միայն տեսլ որ ձեր ազա-տամիտ և նուրբ մարդկային զգացմունքներից բըզ-լած գաղափարները մտեցրին միմեանս կրօնքով տարբեր եղբայրներին և այսօր սոցանից իւրա-քանչիւրը ամբողջապէս մի և նոյն ազգի անուն կրելը պատիւ է համարում իրան: Բայց դուք, իբրև ճշմարիտ ազատամիտ, ի հարկէ կը ներէք ինձ, որ իմ ազգային պատուասիրությունը վիրա-ւորված համարելով, չէի կարող համաձայնվել ձեր լրագրի 95-որդ համարի առաջնորդով ազգի մեծամասնությունը անաղիւ տրտղուր դրօշմե-լուն Հետևաբար իմ ազատ համոզմունքը և կար-ծիքը չը ծածկելով մասամբ պարտաւոր էի ձեզ դիմելու իմ հերքումով (?), սակայն այդ զանցա-ուսությունս էլ ունէր իր պատճառները: Ուստի չեմ կարծում, որ դուք այսուհետև ես բացասելու լինեք իմ նամակներս հիւրընկալելու պատուական «Մշակից» մէջ, որին սկզբունքով (ի բաց առեալ անասուր կէտից), համակրել եմ և իմ համակրու-թիւնս գործով ցոյց տալու միշտ պատրաստ եմ:

Աւետիս Ալախանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գրիգոր քահանայ Գրիգորեանց ԲԱԳՈՒԻՑ խնդրում է մեզ տպել հետեւեալը: «Շատ տեղե-րից զիմում են ինձ հարցնելով թէ քնչի ես ոչ ոքին չեմ ուղարկում «Մշակի» հին գեղորդ հատորը, այն ինչ նա իբր թէ արդէն լոյս է տե-սել: Այդ առիթով պատասխանում եմ ամենքին, որ «Մշակը» զեռ իր բուն մէջ է, զեռ նրա փետուրիները կատարելապէս չեն զարգացած, ուրեմն զեռ լոյս չէ տեսել հինգերորդ հատորը: Բայց խոստանում եմ «Մշակի» առաջին երգը սկսելուն պէս, հէնց իսկոյն թուցնել նրան այն անձանց մօտ, որոնք նրա երևալուն սպասում են»:

«Մշակի» խմբագրութիւնը դիմում է ապառիկ չը վճարած իր բաժանորդներին, խնդրելով որ վերջապէս վճարեն այս տարվայ իրանց ապա-ռիկները:

Ընթերցողի ուշադրութիւնը դարձնում ենք մեր ներկայ համարում տպված պ. Աւետիս Ալա-խանցի «Մշակի» խմբագրին ուղղված նամակի վրա և նոյնպէս ներկայ համարում նոյն պարոնի Ախալցխայի թղթակցութեան վրա: Առաջինում Ալախանցն ասում է որ համաձայն չէ «Մշակի» 95-որդ համարի առաջնորդի հետ, որ վիրտորել է պարոնի ազգասիրական նուրբ զգացմունքները, իսկ իր թղթակցութեան մէջ ինքն չէ նկատում, որ ներկայացնելով հայ հասարակութեան ամեն կողմից տխուր պատկերը, ինքն էլ հաստատում է մեր առաջնորդող յօդուածի հիմնական միտքը: Երկրում է որ լօգիկայի բացակայութիւնը մեր հայոց ինտելիգենցիայի ընդհանուր պակասու-թիւնն է:

ԹԻՖԼԻՍԻ մի քանի վաճառականներ, չը բա-

ւականանալով ամբողջ շարքովայ առուտորու-կերջին ժամանակները սովորութիւն են առել և կիրակի օրին էլ բաց անել իրանց մագաղանները: Այդպիսով վաճառականների գործակատարները և ծառաները, որոնք գոնէ մի օր ազատ ունէին շարքովայ ընթացքում, այժմ իրանց տէրերի ա-գահութեան շնորհով կիրակի օրն էլ ազատ չեն լինում և ստիպված են մնալ խանութում, իրանց տէրերի կամայականութիւնը կատարելու և առե-լորդ մի քանի բուրլի նրանց համար վաստակե-լու նպատակով:

Այս օրերս, ինչպէս մեզ պատում են, թիֆլի-սաքնակ մի հայ-լուսաւորական օրիորդ նշանվում է մի հայ-կաթօրիկ երիտասարդի հետ և մի քանի օրից յետոյ երիտասարդի բարեկամները դիմում են տեղիս հայ-կաթօրիկների լատին պատէր Գօն-Գիմարիին (Թումանեանց ազգանունով) խնդրե-լով որ թե՛ յայ տաշնախմած զոյգին կաթօրիկ եկեղե-ցում պակսկելու: Բայց այդ հայ-կաթօրիկ Գօն-Գի-մարի անունով պատէրը բացարձակապէս մեր-ժում է այդ խնդրը և յայտնում է որ ոչ կա-թօրիկ եկեղեցում թոյլ կը տայ կաթօրիկ երիտա-սարդին պակսկել լուսաւորչական օրիորդի հետ, եթէ այս վերջինը նորից չը միտով ու կաթօրի-կութիւնը չընդունի, ոչ էլ արձակման թուղթ կը տայ երիտասարդին, որպէս զի իշխալ զոյգը պը-սակի խորհուրդը կարողանայ լուսաւորչական ե-կեղեցում կատարել: Այդ դեռ բաւական չէ: Պա-տէր Թումանեանց սպասում է որ եթէ երիտա-սարդի ազգականները իր կամքին չը հնազանդ-վեն ու իրանց բարեկամական յարաբերութիւնե-րը լուսաւորչական հայերի հետ չը կտրեն և աղ-չկան էլ նշանը յետ չը տան, — այն ժամանակ նա կարգելի թէ երիտասարդին, թէ նրա բոլոր ազ-գականներին եկեղեցու մուտքը և հետևաբար ոչ նրանց կը հարողէ, ոչ նրանց նորածին մանուկ-ներին կը կրէ և ոչ էլ նրանց ննջեցանքներին կը թաղի, մի խօսքով կարծարի նրանց եկեղե-ցուց:

«Кавказъ» լրագրի հարցում է որ ԹԻՖԼԻ-ՍԻ մի վաճառական Ս. Ե. ազգանունով, որ վեր-ջին ժամանակ իր գործերի անաջողութեան պատճառով սաստիկ տխրութեան մէջ էր ընկել, այս օրերս անձնասպանութեան փորձ փորձեց խրելով խանալը իր փորի մէջ: Վէ՛րքը վտանգա-ւոր է և վաճառականին իր բնակարանից տարան քաղաքային հիւանդանոց:

«Новое Время» լրագրի հարցում է հետե-ւեալը: «Աչքի առաջ ունեւում Անդրեովկայի մահ-մտեական նախագինելու զանուականների անտե-սական դրութեան անկումն, Ֆինանսների մինիս-տրութիւնը դիտաւորութիւն ունի բաց անել այդ երկրի մի քանի քաղաքներում ազնուական բանկի բաժինները»:

«Новое Время» հարցում է որ բանտային գլխաւոր կառավարութեան մեծաւոր Գալիլին-Վը-րասկի, որ անցնալ տարի ճանապարհորդեց կով-

մերի, բուսականութիւնից զուրկ մի երկրի մէջ, տեղ, լուսաւորված ամառվայ արևի տակ, կիզիչ ճառագայթներով: Տեսակի մի կողմ մի առանձնա-ցած ծառ է երևում միայն, չորս կողմի խոտը գրեթէ այրված է արևի ճառագայթներից, անակի միւս կողմ խոտի և քարերի մէջ աննամ ընկած է մի կաւաք մեծ կարաս, ամառի առջև արեգա-կի տակ, մի չունի վրա փռված չորանում է աղքատ գիւղացու մի քանի կտոր լուսացք: Հե-ռուից երևում են կապտագոյն սարեր: Այս նկա-րի ամբողջ գաղափարը, բայց նա էլ աղբում է նայողի վրա հանդիստ տրամադրութիւն:

Բայց ամենից լաւ աչողվում է Բաշինջաղեանի վրձինին լուսնի շողերի էֆէկտը հանդարտ ջրի մէջ: Լուսնի շողերի արտափայլումը ջրի հան-դարտ մակերևոյթի մէջ, մասնաւոր գեղեցիկ է հետեւեալ պատկերներում. «Լեախվա գետը և Յը-լինվալը լուսնեակ գիշեր ժամանակ» (ծայրված է), «Թիֆլիսի տեսարանը գիշեր ժամանակ, նոր կամուրջի կողմից վեր առած» և հանդիստ առաջին անգամ ներկայացրած «Վեանի լիճը»: Ջրի ընդարձակ հանդարտ տարածությունը, որի մէջ, ափերից ոչ հեռու երևում է Վեանի կղզին, ամ-բողջութեամբ լուսաւորված է լուսնի արծաթա-փայլ շողերով: Գա է մեր նկարչի սիրած թե-ման նկարչութեան մէջ և պէտք է խոստովանվել ար այդ genre-ի մէջ է, որ միշտ կատարեալ ա-

չողութիւն է զտնում Բաշինջաղեանի վրձինը, ներվերը հանդստացնող, հանդարտեցնող մեղմ վրձինը...

Գուցէ հարկաւոր էլ չէ, որ Բաշինջաղեանի տաղանդը հետզհետեւ զարգանալով և կատարեալ-գործվելով, փոխի իր բնաւորութիւնը: Այժմ, մեր ներկայիս դարում ամեն բան՝ թէ բանաստեղծու-թիւն, թէ երաժշտութիւն, թէ նկարչութիւն, թէ վիպասանութիւն՝ ներվերը անչափ ցնցող, հողին վրդովող, սիրտը յուզող է... Թող մի գեղ-արուեստագէտ շարունակի ընթանալ, զարգանալ կատարելագործվել իր ասպարիզի վրա իր մի ան-գամ ընտրած շաւղով, հակասելով ժամանակակից գեղարուեստի ընդհանուր ջլջալին, անսասման գրգիւռ ազդող ուղղութեամբ... Փայթ չէ, հարկա-ւոր է դուցէ, և մի այսպիսի տաղանդ, ս իր սը-հ և ո վազն ող գեղարուեստական ստեղծագործա-կան տաղանդ:

Բայց Բաշինջաղեանի պատկերահանդիսի ամե-նաաչքի ընկնող, ամենից շատ ուշադրութեան արժանի պատկերը, — այդ նրա մեծ նկարն է, մօտ երեք արշին երկարութեամբ և երկու արշին բարձրութեամբ, որի նկարն է «Հայերի դաղթելը Պարսկաստանից դէպի Ռուսաստան, 1828 թվին»: Հայ գաղթականների ընտանիքները, գիշեր ժա-մանակ, խուճը խուճը իջնելով սարերից, ուսու-կողակերի ուղեկցութեամբ, իջնանել են առա-

պարսկական սահմանադրի հովիտներից միտում, մի բաւական լայն և պարզ առուակի ափերին: Պատկերի վրա խառն երևում են հեռեւաններ, ճիւղերներ, գաղթականների վրաններ, նրանց ա-րարաններ, պատկերի ձախ կողմում դեռ սարերից իջնում են գաղթականներ խմբեր, այն ինչ աչ կողմում առուակի ափերին հասած խմբերը բաց արին արդէն իրանց վրանները, կանգնեցրին ի-րանց արարանները, միջից հանեցին ու չորս կողմ դարսեցին այլ և այլ ամենամանրաժեշտ իրողէն-ներն ու անօթները, խարոյկներ վառեցին և նրանց չորս կողմ՝ մարդ, կին, երեխայ բոլորն էլ նստո-տեցին...

Տեսարանը գիշեր է ներկայացնում. մութ ամ-պերից ծագում է լուսինը և իր արծաթափայլ շողերով լուսաւորում է տեսարանի մի մասը՝ առուակի ջուրը և պատկերի գլխաւորապէս աչ կողմը: Այդտեղ նկարչը համազում է մեզ թէ՛ որքան նուրբ զգացմունքով կարողանում է նա ընդունել բնութեան գաղտնիքները և իր վրձինով հաւատարմութեամբ և կատարեալ ընդհանուր-թեամբ ներկայացնել մեզ կտաւի վրա երկու տե-սակ լոյսի կրակի կարմիր լոյսի և լուսնի աղօտ, բայց արծաթափայլ լոյսի կատարեալ հակասու-թիւնը: Գա էլ դժուար իրագործելի խնդիր էր. մտնել միանգամայն երկու տեսակ, միմեանց հա-կասող լուսաւորութիւն պատկերի մէջ, երկուսին

կատարման մասին երկու քաղաքացիական մասի բան-  
տեղը այցելելու համար, այժմ մշակեց և ներկա-  
յայտեց բարձր կառավարութեանը մի պրոյեկտ  
կողմնակալ և Անդրկովկասում բանտային մասը  
վերականգնելու նպատակով: Լրագիրը լսել է որ  
այդ պրոյեկտը արդէն հաստատել է մինիստրների  
մասնագիտորէր և եկող տարվանից, ասում են,  
ձեռնամուկ կը լինին մի նոր կենտրոնական  
բանտի և երկու երկրորդական բանտերի կա-  
ռուցման կողմնակալ և Անդրկովկասում:

Լսում ենք որ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգոր-  
ծական ընկերութեան օգտին արվելու է նոյնամե-  
բի 3-ին մի կոնցերտ: Լսում ենք որ կոնցերտը  
քաղաքային թատրոնում է լինելու:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ԹԻՒՐԻԱ ԵՒ ԲՈՂԱՐԱԿԱՆ ՀԱՐՁ**

Տարին անցնում է, որ Բոլզարիան իր բոլոր  
քաղաքական խնդիրներով և բարեկեցիկ զարգաց-  
մանը և քաղաքական նպատակներին նվիրել և ա-  
ռարկայ է դարձել: Ուրիշ անգամ առիթ ենք ու-  
նեցել ցոյց տալու, որ բոլզարական խնդիրը այն-  
քան ծանրակշիռ նշանակութիւն ունի Բալկանի  
արևելեան խնդրի, ուրիշն և մի քանի պետու-  
թիւնների կենսական շահերի համար, որ բոլզար-  
ական այժմեան կրկնաբար քննականաբար դարձրել  
է զէպի իրան թէ Ռուսաստանի ամբողջ քաղա-  
քականութեան ուշադրութիւնը, թէ Անդրկովկայի  
հայեցողները, թէ Աւստրիայի և Գերմանիայի հե-  
տաքրքրութիւնը: Եւրոպական քաղաքականութեան  
այժմեան ընթացքի ժամանակ, բոլորովին զարմա-  
նալի չեն այն բոլոր ելեւէջքները, որոնք տեղի են  
ունենում Բոլզարիայի մէջ, Բոլզարիայի շուրջը,  
Սօֆիայում և նրա շուրջը կողմնակալ: Համարեա  
հասել է վերջին շրջանը. ազգային ժողովը գու-  
մարված և բացված է հոկտեմբերի 19-ին, առա-  
ւօտեան 11 ժամին: Ուշադրութեանը կրկնա-  
պատկւած են. առաջ երկու նաւ վարան է զը-  
նացել: Բայց այդ բոլոր քաղաքական փոթորիկ-  
ների ժամանակ Թիւրքիան անհասկանալի սառնու-  
թեամբ է նայում զէպի բոլզարական այն գործերը,  
որոնք ամենից շատ իր հետ կապ ունեն, որոնք  
ամենից աւելի իր շահերի վրա են ազդում: Թիւր-  
քիան մինչև անգամ կամենում է մոռանալ և  
այն, որ Բոլզարիայի խնդիրը Բալկանի խնդիր  
է, իսկ Բալկանի խնդիրը Թիւրքիայի խնդիրն է:  
Նոյն իսկ եւրոպական միջազգային դաշնադրու-  
թիւնների զանազան յօդուածներին հիման վրա  
Թիւրքիան ամենից աւելի իրաւունք ունի հակելու  
և խառնվելու այն Բոլզարիայի գործերի վրա,  
որի մի մասը, Արևելեան-Ռումէլիան, զիպլոմա-  
տիայի շնորհիւ դեռ Թիւրքիայից կախում ունեցող  
երկիր է համարվում: Բ. Գուռը դեռ ունի գեր-  
իշխանութիւն: Միայն նոր, վերջին օրերում, Բ.  
Գրան կողմից Գաղթան-էֆէնդին Բոլզարիա դնաց  
հաղորդելու Օսմանեան պետութեան հայեցող-  
ները...

Ինչպէս երևում է, անտեսապէս և բարոյապէս  
մաշված Թիւրքիան ոյժ չունի ձայն բարձրացնելու  
նոյն իսկ այն խնդիրներում, որոնք իր շահերի  
հետ անմիջական կապ ունեն: Մի կողմից եզրի-  
տական խնդիրը, մի կողմից Տրիպոլիսը, մի ու-  
րիշ կողմից ասիական նահանգների շարժումները,  
չորրորդ կողմից Ֆինանսական կրկնաբար, ինչպէս  
երևում է, ամենամարդ գրութեան մէջ են զրել  
Օսմանեան պետութեան ղեկավարներին: Ամենա-  
նշանակաւոր բոլզարիան անգամ, երբ ամեն կողմից  
սպասում էին և սպասում են որ Թիւրքիան իր  
կարծիքը և ցանկութիւնը կը յայտնի, նա միայն  
հանդիսատեսի դեր է կատարում: Վերջին ժամա-  
նակները եւրոպական մամուլը միշտ այն մտքի  
վրա է սնդում, որ Ռուսաստանի և Թիւրքիայի  
մէջ պայման է կապվել բոլզարական գործերի  
վերաբերութեամբ: Եւրոպայում մեծ ազմուկ դրեց  
այն կարծիքը, որ Պոլսում անգլիական ազդեցու-  
թեան տեղ հաստատվում է ռուսականը: Մի ժա-  
մանակ մինչև անգամ անգլիական լրագիրները ար-  
համարանքով խօսելով Թիւրքիայի դաշնակցու-  
թեան մասին, պարզ կերպով յայտնում էին, որ  
Պոլսը այլ ևս Անդրկովկայի համար շատ մեծ նշա-  
նակութիւն չունի... Սուլթանի կողմից ցոյց  
տուած ստան ընդունելութիւնը Պոլսի եկած անգ-  
լիական դեսպան-աւելի մեծ ազմուկ գցեց: Նոյն  
Սուլթանը մեծ պատուով ընդունեց Ֆրանսիայի  
ներկայացուցչին, և դրանով հանդէս եկաւ նորից

և եզրիտական քաղաքականութեան խնդիրը...  
Մի կողմից Թիւրքիան լուրեր էր տարածում,  
որ զօրք կողարկի Արևելեան-Ռումէլիա, միշտ  
ընդունելով, ուրեմն և համաձայնութիւն ցոյց տա-  
լով ռուսաց կառավարութեան քաղաքականու-  
թեանը: Թիւրքիայի դերը այդ բոլոր ժամանակը,  
ինչպէս և միշտ, շատ անորոշ և աննախանձելի  
է. Թիւրքիան ստիպված է համաձայնութիւն տալ  
Ռուսաստանի ցանկութիւններին. Թիւրքիան սի-  
րահարութիւններ պէտք է անի մի և նոյն ժամա-  
նակ Անդրկովկայի հետ. Թիւրքիան քաղաքավարի  
պէտք է լինի և Աւստրիայի հետ. նա կամայիննա-  
նոր պէտք է անի և Բիւսարկին. նա սիրալի  
հայեցողներ պէտք է ուղղէ և զէպի Ֆրանսիան...  
Դա մի շատ ծանր և կասկածելի դեր է: Յազ-  
թութիւնը ուժեղի կողմն է մնալու... Եւ ան  
այդպիսի դրութեան ժամանակ Գաղթան-էֆէնդին  
Սօֆիա է գնացել բոլզարական գործերի վրա ազ-  
դելու համար: Նա յայտնել է Բ. Գրան կողմից  
բոլզարական խնամակալութեանը, որ Թիւրքիան  
չէ ընդունում ազգային մեծ ժողովը, քանի որ  
ընտրութիւնների մէջ մասնակցել է և Արևելեան  
Ռումելիան: Թիւրքիայի կարծիքով, այդ օրէնքի  
հակառակ է: Խնամակալութիւնը պատասխանել  
է, որքան երևում է մեզ հասած տեղեկութիւն-  
երից, որ իշխան Ալէքսանդրը յանձնել է իրան  
երկրի բոլոր իրաւունքները, և այն ինչ որ իրա-  
ւունք ունէր անկող իշխան Ալէքսանդրը, նոյնը  
կարող է անել և այժմեան կառավարութիւնը:  
Խնամակալութիւնը աւելացրել է, որ Բոլզարիան  
հարկաւոր գործերի համար կը դիմի: Բ. Գրանը,  
ինչպէս պահանջում են պայմանագրութիւնները,  
և արդէն Պոլսի է զրկված մի ներկայացուցիչ:  
Գաղթան-էֆէնդին, ինչպէս հաղորդում են Սօֆիա-  
յից և մի քանի ուրիշ տեղերից, յայտնել է, որ  
Իրան թէ Թիւրքիան համարում է Ռուսաստանի  
պահանջներին: Թէ որքան հետեղական կը լինի  
այդ բոլորը, այդ մտտիկ ապագան ցոյց կը տա:  
Բոլզարական խնդիրը ամենամարակշիռ շրջանի  
մէջ է, և եթէ Թիւրքիան այժմ էլ կը պահպանի  
